

ՀԱՆԴԵՍ ԳՐԶԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԲԺՇԿԱՐԱՆՔ

ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՆԱԽԵԱՑ մատենագրութեան մէջ
ընական գիտութեանց վերաբերեալ մատեններ
հազուադիւս են. և մեր մատենագիրքը աւելի
պատմական և եկեղեցական ուսմանց պա-
րագելով, այժմ զգալի է ընդդիմականին
վերաբերեալ զրոյց պահասութիւնը. բայց զու-
ցէ (թէև շատ տարակուսական է) նախնիք
գրած, կամ թարգմանած ըլլան նոյն մատ-
նածիւղին յատուկ զբոյր, որոնք ժամանա-
կին ծախիչ և կամ բնական կամ անբնա-
կան աւերիչ ազդակներու ենթարկուելով,
արդ մեր մատենագրութեան մէջ գիտութեանց
և գիտական բառերու մեծ պակաս մը կը
մնայ: Մեր նպատակն չէ մանրամասն և ընդ-
հանուր տեղեկութիւն տալ հայ բժշկարանաց
վրայ, այլ անոնցմէ միոյն վրայ կ'ուզենք ամ-
փօի ուսումնասիրութիւն մը ներկայացընել:

Ուսումնասիրելի բժշկարանս կը կրէ «Մար-
դակազմաշրիշն» անունն: Միջազգի, յօտա-
զիր, միասին մատենաւ մ'է, կազմուած .
ծածըն . ստուարաթղթէ կաշեպատ: Ամբողջ
գիրքը բազկացած է 113 թղթերէ (ունի 6
չափարկ թղթեր) զիրն մարուր և ընթերցելի.
նիւթոց վերնազերին կարմիր տառերով: Չունի
զարդազոյր: Էջերու թուերն անկարգ են և
շատ էջ անթիւ: Նոյնպէս կազմն անկարգ
է. զբքի առաջին էջը կը սկսի 188 էջէն, իսկ
բուն մարդակազմութիւնը 1 թուակիր էջէն:

Գրքին առաջին նիւթն է համառոտ նկա-
րագրութիւն անուանի և պիտանի ականց, կը

կրէ հետեւեալ վերնագիրն «Յաղագս որպի-
սոչքեան ականց պատուականաց, բնոչքեանց
կերպից. և զոյնոց և տնտեսնց նոցին»:

Երկրորդ մասը ընդարձակօրէն կը խօսի
մարդակազմութեան և առողջարանութեան
վրայ, իսկ երրորդ մասը ընդհանրապէս հա-
մառոտ տեղեկութիւններ են զեզօրէկց:

Գրչաբեր մատենին առաջին էջին մէջ կը
գտնենք հետեւեալ յիշատակարանն. «Օրի-
նակեալ ձեռամբ Մանուկէ պնտացւոյ, եւ
որդի բժիշկ Սահակեան եւ ի թուին Հայոց
ՌԲՃԶԻՆ (1753), ելել ի մայրաքաղաքն Քա-
նաս» : Յիշատակարանէս կը հասկնանք որ
այդ օրինակոյն է Տրապիզոնցի Հ. Մի-
նաս Վ. Բժշկեանի հայրն¹:

Կ'ուզենք բննել թէ բժշկարանս զուտ օ-
րինակութիւն է, թէ հաւաքումն. և եթէ օրի-
նակութիւն մ'է, ուստի՞ հաւանական է որ
օրինակուած լինի Պանոսցին Մանուկ. միայն
կը զրէ թէ օրինակած է, և բնագիրն չի յի-
շատակիր: Կրնայ առարկուիլ թէ արդեօր
օրինակել բառն նիւթապէս ընդօրինակել
պէտք ենք հասկնալ, թէ քաղաքումն զորմ
մը. վասն զի ինչպէս կը տեսնենք Միսիրաբ
Հէրացոյ Ջերմանց գիրքն, որ նոյն ինքն
Միսիրաբ իւր յառաջաբանին մէջ ոչ հնդկ-
նակութիւն, այլ թարգմանութիւն կ'անուանէ.
կը զրէ «Կամեցայ, բոտ իմոյ կարողութեան
առնել զգիրքս զայս» միայն վասն երեք ազգ
Ջերմանցն համառոտ՝ նախադիմութեամբն և
ստածմամբն, Ջրովանգալին՝ որ վասն արուես-
տի բժշկութեանս՝ թնդի, և գերեր ազգ Ջեր-
մանցս միայն հաւաքեցի, և քարգլմանցի ի
հայ բառ»: Հերացի բժիշկն քարգլմանցի
կը զրէ, բայց բանիւրուն բանասէր Հ. Ղ. Վ.
Յովհաննէան հետեւեալ մեկնութիւնը կու տայ.
«Մեզի այնպէս կ'երեւայ որ Միսիրաբ Կա-
մեցայ... առնել զգիրքս, ... հաւաքեցի և
քարգլմանցի» բնիւթ կը յայտնէ թէ ի ձե-
ռին ունենալով այլեւայլ օտար լեզուաւ գրքեր,
անոնցմէ քաղած, կարգի գրած, իւր անձ-

1. Բժիշկն Մանուկ կը հանգչի Տրապիզոնի
Հայ Լուսաւորչական Աստուածածին եկեղեցւոյ
աւագ խորանին կռնակը. վրան կանգնած են

կենդան գրեղեցիկ գերեզման մը՝ արձանազրու-
թեամբ որ կը վերջանայ, «Բժիշկի, բժշկեալ գանձն
քո» խօսքով:

նական դիտողութիւնքն ու փորձառութիւնքն յաւելցուցած . . . նոր գիրք մի յօրինած է Հայերէն լեզուաւ : Եւ որովհետեւ ի ձեռին ունեցած գրքերն օտար լեզուաւ էին, անոնցմէ քաղած կամ հաւաքած մասունքն ի հարկէ թարգմանելու էր¹ :

Մենք յետագայ ուսումնասիրութեամբ, պիտի ջանանք ցոյց տալու թէ արդեօր՝ Մանուկ բժշկական խմբի զորքն զուտ բնագործնականութիւն է թէ քաղաւածոյ զորք մը, շատ հաւանական է որ յիշեալ Մանուկ՝ ինքն եւս բժշկի բլաւալով, այս զորքն իրեն ծանօթ բժշկարաններէ հաւաքած, համաօգտած և ինքն եւս մի քանի բաներ աւելցուցած է :

Մեր յաջորդաց մատուցարանին մէջ զանաւոր տասնեակ բժշկարաններն ասոր հետ բաղկատեղով, բոլորովին յար և նման մը չենք գտած, նոյնպէս նաեւ Վիեննայի Միքիթարեան պատուական Հարց զրպարաց ցուցակին մէջ չենք գտնիր ասոր նման զորքի մը յիշատակութիւնը. բաց ի աստի, Մանուկ Բժշկականի այս զորքին բովանդակութիւնն ըզգտաւելով Ամիրտարաթայ² բժշկարանին

ամենէն ընտիր օրինակին հետ, կը տեսնենք որ Մանուկ իր մարդակազմութեան մեծ մասը այն զորքէն քաղած է :

Ամիրտարաթայ բժշկարանին մէջ (յէջ 25) կը կարդանք երկար ներածութիւն մը, նոյնը նաեւ Մանուկի բժշկարանն ունի և կը սկսի առջին Էջին Առաջաբանօրինակէ վերնագրով : Ամիրտարաթայ իր ներածութիւնը բաժնած է վեց պարբերութեանց³, իսկ Մանուկ՝ այն ամէնն մի երկար պարբերութեան մէջ յիշած է : Մանուկ՝ «Առաջարանով» կ'իմացընէ թէ բժշկութեան ուսուցը պէտք է որ ամէն ոք գիտնայ իրբեւ աստուածային պատուը մը, և անոր համար կը յիշէ հետեւեալ դէպքն. «Եւ զորք է ի հին կտակարանին թէ, Մովսէս հրեանպատաւ և եկին նորայ սիրելիքն թէ զեղ արա բեզ, և նա ասաց թէ ցօ ետ ինձ զայս հրեանպութիւնս, նա զեղն, և ստաւ ծուռն ինքն տա, և ձայն եկել ի վերուստ, թէ զեղ արա՞ բեզ, զի զեղն այլ ես եմ ստեղծեր, և ստաւ ծուռն այլ իմ հրամանալն է, և զեղ արա՞ բեզ, և ես տամ զտոյջնութիւն» : Բայիկն Մանուկ բժշկութեան ծա-

1. Հմմտ. էջ 72. Հետադասութիւնք նախնեան ամսկօրէնի վրայ. Հ. Վ. Վ. Յովնանեան Վիեննա 1897 : Հեղինակն իւր վերոյիշեալ մեկնութիւնը ապացուցանելու համար համադրէ իրատեղի ունի :

2. Հայ բժշկաց պարագլխոյն կենսագրութիւնը աւելորդ կը համարենք աստ երկրորդէլու, քանի որ շատ անգամ ի Բագմալիպիս և ուլլուր խօսուած է անոր մասին . բայց կարելու որ կը դատենք համառօտ ծանօթութիւն մը տալ իւր բժշկարանին այն օրինակին վրայ : Ռուս հետ պիտի Բագմալիպիք վերոյիշեալ ձեռագիրքն : Բաղկացած է 480 մեծագիր երկուսն էջերէ : Հաստ և ողորկ է թուղթը, զորութիւնը նօսրգիր տեղ տեղ շատ մանր գրուած : Մեծ մասը նոյնագիր է. բայց տեղ տեղ տարբեր գրութիւններ ալ կ'երեւին : Իջ 15 գրուած կը գտնենք հետեւեալ յիշատակարանը .

« Յոյսպէս գերքն շինեցի եւ անպիտան և անարժան նուաստ ծառայոյ աստուծոյ ամբլութեամբ բժշկին ամասիացիին ի մարդաբաղաքն ի Քիլիկիայ ի թուականութեան հայոց ԶԺԵ (1466) ամին . և ամսոյն զեկտեմբերի իւնին. օրն հինկ-

չարթի. և ծնունդն էր . ք. փրկչին, այլազգեաց . եւ այնչափ որ իմ ուսն էր նա ջանացի զայս կատարել. եւ ով որ կարգայ կամ օրինակէ, թէ եկեղեցական է թէ բժշկի է մի խափանէք : եւ ով որ ջանայ որ կարէ մի թուսթ խմանէ կամ զոգնայ բանագրած է Ե. ՅԲԸ. հայրապետացն և ջանացէք որ դասնադասնքն չի ընդունիք . և զինչ որ գրած է զայն արարէք » :

Յառաջարանին վերջը՝ (էջ 17) գրած է . « Թարգմանեցաւ պատուական բժշկարանն ի թուականին հայոց . ԶԺԸ. (1469) ամին. զեկտեմբերի. ԽԵ. որ ծնունդն էր փրկչին, այլազգեաց հայուսնէ . ի կաթողիկոսութեան տեսան ըռոտագիտին, և եպիսկոպոսութեան տեսան յովակիմին (է պատրիարքն Կ. Պոլսոյ) որ կարգայք և օրինակէք թարգմութիւն մեղաց ինդրեցէք ի քրիստոսէ . թարգմանողի զրոցս ամբլութիւնն, որ աստուած զձեզ յիշէ . ի միւս անգամ զարուստն, ամէն » : Բժշկարանս Կ. Պոլսէն բերած է Հ. Ղուկաս Խնճեհեան 1790 թվր. հոկտ. 8 : Մոսկոյն փայտ է և շաղանակազոյն կաշուով պատած :

3. Հմմտ. Ամիրտարաթայ, էջ 25 :

գումը Ի Յունաց կ'ընդունի, որանցմէ անցեր է Հնդկաց և յետոյ Հռոմաց, բայց ամենէն աւելի կը յարէ յոյն բժիշկները: Այս յառաջաբանը գում օրինակութիւն մ'է Ամիրատորութեայ յառաջարանին և տարբերութիւնը ամենաշնչին են: Յառաջարանին վերջը Մանուկ՝ խոշոր վերնագրերով բուն բժշկական գիտութեան վրայ կը սկսի ճառել, վերնագիր կը դնէ՝ «Վերծանելուն իսկապէս բժշկական մակացութեան: Սխառնի»¹: Եւ կը յիշէ «զտարեւ, և զբաժին բժշկութեան»²: Այս պարբերութիւնն և նոյնպէս հետեւեալներն «Եւ չարն ըստոյշոշաքին»³: «Գուռն որ յիշէ, զմիզամն և բնութիւնն»⁴: Բժիշկն Մանուկ՝ Ամիրատորութեայ բժշկարանի 25 էջին մինչեւ 29 էջ, ընդօրինակած է վերոյիշեալ պարբերութիւնը առանց մի տող յապաւնելու: Յետոյ իր ընդօրինակութիւնը Ամիրատորութեայ բժշկարանին կարգին չեն համապատասխաներ: Մանուկ կը ճառէ մարդակազմութեան վրայ և Ամիրատորութեան կը քաղէ մարդու գործարանաց և անոնց ատոցլութեան վերաբերեալ գրութիւնը, բայց իր մարդակազմութեան պարբերութիւնը Ամիրատորութեայ բժշկարանին պէս կարգաւորեալ չեն: Յէջ 45, 46, պարբերութիւնը հաւասարմանութեամբ ընդօրինակուած են Ամիրատորութեայ բժշկարանին⁴: Մանուկ՝ յէջ 48 կը խօսի «Աղէ-ճորտներու» ստեղծման վրայ. այս պարբերութիւնը ըստ Ամիրատորութեայ բժշկարանին կիսատ է և անկատար⁵: Ատոցլարանական պայմաններու մի քանի պարբերութիւնը յէջ 49, 20, 21, կարգաւ ընդօրինակութիւնը են Ամիրատորութեայ բժշկարանին⁶: Այս պար-

բերութեանց յաջորդ գլխակարգութիւնը որ կը ստրկեցնէ լուծման գեղ խմելու միջոցներն, խնկաւ առաջին տասնեակ տողերով նման է Ամիրատորութեայ բժշկարանին, բայց յետոյ բարբառովն նմանութիւնը կը փոխուին (Մ. յէջ 22. Ա. 48): Պարբերութիւնը «Վասն ստեղծման մարդոյ» (24)⁷, «Վասն ծննդեան մանկանն քէ որպէս է» (29)⁸, «Եւ մարդակազմութեան առաջն գոսկերքն է» (30)⁹, «Կերպ ստեղծման գլխոյ և յղեղին» (33)¹⁰, «Վասն ստեղծման վայճղան» (35)¹¹, «Վասն ստեղծման քորին» (36)¹², «Վասն ըստեղծման լեղոյն» (37)¹³, «Վասն ստեղծման սրբտին» (39)¹⁴, «Կերպ ստեղծման լեղոյն» (40)¹⁵, «Վասն ստեղծման աղեցն» (41)¹⁶, «Վասն ստեղծման հարպշտին» (42)¹⁷, «Կերպ վասն կազմութեան աղեցն» (43)¹⁸, և նոյնպէս անտի սկսեալ՝ այսինքն 43 էջին մինչեւ 66 էջ, մարդակազմական և ատոցլարանական ստեղծութիւնը պարզապէս Ամիրատորութեան ընդօրինակուած են¹⁹: Պարբերութիւնն «Վասն ի բաշմէն լուսացուելոյ»՝ կիսակատար ընդօրինակութիւն է Ամիրատորութեայ գործին²⁰: Ասոր յաջորդ պարբերութիւնը յէջ 69 մինչեւ 443 էջ կարգաւ Ամիրատորութեայ երկն (էջ 49-68) ընդօրինակուած է և մի քանի պարբերութեանց մէջ աննշան տարբերութիւնը կը գտնուին:

Մինչեւ ցարկ ի մէջ բերած պարբերութիւնը ըսինք որ ակն յայտնի ընդօրինակութիւնը են Ամիրատորութեայ յիշեալ բժշկարանին: Մանկան բժշկարանին միւս մասերն ընտւ չեն համապատասխաներ Ամիրատորութեայ հեղինակութեան հետ: Ուրիշ յօդուա-

1. Հմտ. Մանուկ էջ 7. Ամիր. էջ 26:
2. Հմտ. Մեկ. էջ 9. Ամտ. էջ 27:
3. Հմտ. Մեկ. էջ 44. Ամտ. էջ 28:
4. Հմտ. Ամտ. էջ 37:
5. Նոյն էջ 37:
6. Նոյն էջ 47:
7. Հմտ. Ամիր. էջ 50:
8. Նոյն էջ 52:
9. Նոյն էջ 53:
10. Նոյն էջ 54:
11. Նոյն էջ 55:

12. Նոյն էջ 56:
13. Նոյն էջ 56:
14. Նոյն էջ 55:
15. Նոյն էջ 55:
16. Նոյն էջ 57. Մանուկ այս պարբերութիւնը Ամիրատորութեան ընդօրինակած է համապատասխան:
17. Նոյն էջ 58:
18. Նոյն էջ 58:
19. Նոյն էջ 58-46:
20. Նոյն էջ 46:

ծով կը խօսերն նիւթաց վրայ և ընդհանուր բժշկարանին մէջ գտնուած ուսումնական բաւերուն և անոնց ամսանց մասին. իսկ ներկայիս լաւ կը համարենք ամիսի տեղեկութիւն մի տալ նոյն մարդակազմութեան այն մասանց վրայ, որոնց վրայ կարելի է հրապարակաւ խօսիլ:

Առաջարկութիւնն է վերջը կը խօսի բժշկի պէտք եղած գիտութեան վրայ. կը պահանջէ որ բժիշկ մը օգտակար բլլալու համար պէտք է որ իր ուսման շատ լաւ տեղեկ և հմուտ բլլայ: — «Դուռն որ յիշէ, զմիզան և բնութիւնն» վերնագրով պարբերութեան մէջ բնագահանուր կը խօսի արեան և մազէի գանազան վիճակաց վրայ: Կը գրէ.

«... և գիտայիք որ արեան բնութիւնն տար է և գէժ. և իւր բնծայման տեղն լերդն է, և ունի զօթն. և սափրային բնութիւնն տար է, և չոր ի կրակին բնութիւնն է. և իւր բնծայման տեղն լեղին է. և պաղղամին բնութիւնն հով և գէժ է, և ունի զլրին բնութիւնն, և իւր տեղն թոքն է. և սաւառին բնութիւնն հով և չոր է, և ունի զհողին բնութիւնն և իւր բնական տեղերն փայծեղն է...»:

Յէջ 16 մանրամասն կը նկարագրէ ստամոքսի կազմութիւնը անոր ձեւն և մէջը կը գնէ չորս տեսակ ուտ, որոնք առանձին գործ ունին, առաջինը բաց բժշկապետաց կոչի ունին, առաջինը բաց բժշկապետաց կոչի «դռարի ձագիպա, որ է բարշտութեան յուսն». երկրորդն «դռվարի մասիքա, որ է բնուութեան յուսն». երրորդն՝ «դռվարի հագիմա, որ է երկրութեան յոյսն», չորսրորդն, «դռվարի տափա, որ է այն յուսն որ արտաքս վաթէ, գաւելուածն ի ստամոքսն»: — Աշխատելը, շարժումն շատ օգտաբէն է: — «Աշխատելն, և անխափն, ի կերակրէն կար կը համարի, «և աշխատելն շատ օգտաբէն է, առաջ կու պիտի որ դատամբն յուսնայնէ, և զկերակուրն հալէ, և զբնութիւնն կալցաւ և զգեղն ամրացնէ» (էջ 20): — Յէջ 24 «Վասն ստեղծման մարդի» վերնագրով կը խօսի ծննդեան վրայ, և այդ պարբերութեան վրայ, և շատ լինիւր աւելի բնախօսական ճառ մ'է: — Ուսմանը ամսանոցութեանց մէջ մտած է: — Ուսմանը կազմութեան (էջ 30) վրայ հետաքննարկ կազմութեան տեղեկութիւն կու տայ. «Գիրքերական տեղեկութիւն կու տայ. «Գիրքերական տեղեկութիւն մարդոյ սին է արարեր արարիչն Աստուած, և մարդոյն հինն, և անոնց սկիզբն չի մնար և չի կարնար կանգնել ի վերայ ոտիցն»: — Գլխոյ և ուղեղի վրայ խօսելով, սիրար մարդուս կազմութեան թագաւորն կ'անուանէ, ուղեղը անոր համախոհը, լերդն տանուաւր: Տակաւին ծանօթ է թէ լինէ և փայծեղան պաշտօնը, բայց այս բժշկարանին մէջ կը գտնենք (էջ 35) հետազայ բացատրութիւնը «գետացիք որ փայծեղան բնութիւնն հով է և չոր... ինքն է տուն ստուային... Եւ օգնութիւն փայծեղան այն է որ գտտեան միտին ի ինքն բաշէ... և իւր կերակուրն է արեան միտը»: Ասանձին պարբերութեամբ կը խօսի թոքի, լեղւոյ, սրտի, լերդի, աղեսոյ, և աշտ վրայ: Չուարձայի է ականջի նկարագրութիւնը, «Գիտացիք (էջ 47) որ ձեւ ականջացն այսպէս է, որ և Արարիչն Աստուած, այնոր համար է ստեղծել, որ լսէ ձայնն դաժնեացն և հասկանայ շուտով, և ինքն որպէս նախ երբան է, և ծակն ականջացն, սրոր սրոր է, զէտ կեղեկոն. և Աստուած իւր սղորմութեամբն այնոր զայն հանցն է արեւ, որ կամ վատ հով կամ հով ինքն չի մտնէ: և զականջաց ջուրն այնոր համար լեղի արար Աստուած, որ սիւն անասուն և սողուն ի ինքն չի մտնու, և այն լեղի ջուրն սպաննող է և ամէն ժամ կու սպանէ»: Նոյն էջին մէջ բթի վրայ խօսելով: բթի երեսին շնորհը կ'ընդունի, «Եւ առանց բթին երեսն շնորհը չունի»: Յէջ 56-59 առողջաբանական մի քանի կանոններ կու տայ. յետոյ կը խօսի պտուղ ու տեղու, ջուր և գինի խմելու համար, կը գրէ «Առ Արիստոտէլն, և մեծ խմանասանն, թէ ես զգինին բնաւ չի խմեցի և չը հաւանեցա, և ես զայն իրեն չեմ խմել, որ զեղեքս կարցնէ»: Քնոյ և արթնութեան վրայ խօսելով կը յայտնէ հետեւեալ ճիշդ գաղափարը. «Եւ բնաւ անհեղին, կու պիտի որ քունն և արթնութիւնն չափաւոր լինի, և թէ շատ արթնութիւնն, ջուր ցարեք բերէ առ մարդն»: Յէջ 69 կը խօսի արեւն առնելու վրայ, երբ և իր անձերն պէտք է արեւն առնել. կը գրէ «... և թէ այն մարդն որ սրտամառ ունենա, կամ սրտաւ կամ խոչակն բնութի, այս-


տացիք որ ոսկերքն մարդոյ սին է արարեր արարիչն Աստուած, և մարդոյն հինն, և անոնց սկիզբն չի մնար և չի կարնար կանգնել ի վերայ ոտիցն»: — Գլխոյ և ուղեղի վրայ խօսելով, սիրար մարդուս կազմութեան թագաւորն կ'անուանէ, ուղեղը անոր համախոհը, լերդն տանուաւր: Տակաւին ծանօթ է թէ լինէ և փայծեղան պաշտօնը, բայց այս բժշկարանին մէջ կը գտնենք (էջ 35) հետազայ բացատրութիւնը «գետացիք որ փայծեղան բնութիւնն հով է և չոր... ինքն է տուն ստուային... Եւ օգնութիւն փայծեղան այն է որ գտտեան միտին ի ինքն բաշէ... և իւր կերակուրն է արեան միտը»: Ասանձին պարբերութեամբ կը խօսի թոքի, լեղւոյ, սրտի, լերդի, աղեսոյ, և աշտ վրայ: Չուարձայի է ականջի նկարագրութիւնը, «Գիտացիք (էջ 47) որ ձեւ ականջացն այսպէս է, որ և Արարիչն Աստուած, այնոր համար է ստեղծել, որ լսէ ձայնն դաժնեացն և հասկանայ շուտով, և ինքն որպէս նախ երբան է, և ծակն ականջացն, սրոր սրոր է, զէտ կեղեկոն. և Աստուած իւր սղորմութեամբն այնոր զայն հանցն է արեւ, որ կամ վատ հով կամ հով ինքն չի մտնէ: և զականջաց ջուրն այնոր համար լեղի արար Աստուած, որ սիւն անասուն և սողուն ի ինքն չի մտնու, և այն լեղի ջուրն սպաննող է և ամէն ժամ կու սպանէ»: Նոյն էջին մէջ բթի վրայ խօսելով: բթի երեսին շնորհը կ'ընդունի, «Եւ առանց բթին երեսն շնորհը չունի»: Յէջ 56-59 առողջաբանական մի քանի կանոններ կու տայ. յետոյ կը խօսի պտուղ ու տեղու, ջուր և գինի խմելու համար, կը գրէ «Առ Արիստոտէլն, և մեծ խմանասանն, թէ ես զգինին բնաւ չի խմեցի և չը հաւանեցա, և ես զայն իրեն չեմ խմել, որ զեղեքս կարցնէ»: Քնոյ և արթնութեան վրայ խօսելով կը յայտնէ հետեւեալ ճիշդ գաղափարը. «Եւ բնաւ անհեղին, կու պիտի որ քունն և արթնութիւնն չափաւոր լինի, և թէ շատ արթնութիւնն, ջուր ցարեք բերէ առ մարդն»: Յէջ 69 կը խօսի արեւն առնելու վրայ, երբ և իր անձերն պէտք է արեւն առնել. կը գրէ «... և թէ այն մարդն որ սրտամառ ունենա, կամ սրտաւ կամ խոչակն բնութի, այս-

պիտեացն մի համբերէր, թէ զիշերն թէ ցո-
րեկն, երակ առ շուտով»։ ՅԷջ 74 մաս-
նաւոր պարբերութեամբ մը կը խօսի մարդու
իր առողջութիւնը չի կորսնցնելու միջոցնե-
րուն վրայ։ «Էհանան ասէ թէ պահէն զա-
ռողջութիւն այն է, որ զընտելեան շարժ-
մունքն, և զըմպելին չափաւոր պիտի այնել»։
Յամաքով և նաւով ճանապարհորդաց համար
առողջաբանական օգտակար պատուէրներ
կու տայ (Էջ 73-75)։ — Յաջորդ յօդուա-
ծով կը սորվեցնէ թէ նորածին մանկանց
կերակուրն ինչ պէտք է լըլալ։ Յետոյ երակ
քննելու վրայ և հիւանդութեանց մի քանի
նշաններու վրայ կը խօսի։ ՅԷջ 99 հիւան-
դին մահուան նշաններու վրայ կը խօսի։
Ըստ այս բժշկարանի մահուան նշաններ են,
«Թէ (հիւանդին) քիթն բարակնա, աչուին
խորունկ անկանի, և բերանն ծոխ կամ բաց
մնա... Եւ թէ մատներուն ըզուռնի կապուա-
նա, և երակն զէտ մռչմի լինի, և թէ ձեռքն
և ոտքն սեւ լինի, բայց ուժն ուժով լինի,
բարու նշան է»։ Եւ թէ հիւանդն ի տաք հի-
ւանդութիւնն աչուիբաց մնայ, մահու նշան
է։ Եւ հիւանդին ըզուռն զէտ սիսեռ սեւ իւրքմ
եղանէ, մէկ այլ օրն մեռնի»։ և այլն։ ՅԷջ
106-109 կը խօսի տարւոյն չորս եղանա-
կաց մէջ մարդու պատահած հիւանդութեան
մասին։

Հոս կը վերջացնենք մեր համառօտա-
գրութիւնը։ Վասն զի մինչեւ այս պարբերու-
թիւններն կը հասնի Մանուկ բժշկի ընդ-
օրինակութիւնը։ Բժշկարանին զեռութիւնն
այնքան արհամարհելի չէ, մի քանի սխալ
զրութիւններէ զատ, մեծաւ մասամբ ճշգու-
թիւն կ'երեւի մարդակաշմական և առողջա-
բանական բացատրութեանց մէջ։ Ընդուն
բազմաթիւ ուրիշ վերջնադարեան ուսմի-
րէն բարբառներու բառական օրոշ է և ընտիր,
ուսումնական բառերու մեծ մասն արաբերէն
է, եւրոպական բառեր ալ գործածած է։

Հ. Ս. ԵՐԵՄՅԱՆ

Շարայարելի



→ Ժամանակակից

Կերպարանը մը։ →

Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ն Ք Ի Ի Կ Է Բ

ԲՈՒՈՐ Եւրոպայի լուրջ և մեծանուն լրա-
մի գիրները գրագած են ներկայիս մի առ
մի պատմելու Տրանսպիլա Նախագահին Քրիս-
կէրի ամէն մէկ քայլը յԵւրոպա ճանապարհ-
հորդութեան մէջ, մանրամասն կը նկարա-
զրեն եղած ընդունելութիւնները, կը վիճեն
որ արդեօք վարչութեան մը կամ պաշտօ-
նէի մը այս խօսքը կամ այն կերպը պաշ-
տօնական էր թէ կէս պաշտօնական կամ ոչ
պաշտօնական։ Բաղանջակի Գաղղիայի ժողո-
վուրդը տասը օրուան մը չափ չէր զիտեր
թէ ի՞նչ միջոցներ ստեղծէ պատուելու այդ
նախագահը և կեցցէներ կոչելու Պօլքներուն
օրոնք անօքնական կը մեռնին պաշտելու վրայ։
Ահաւոր ատելութիւնները գրուեցան Գերմա-
նիոյ կայսեր և իր կայսրութեան ատենա-
պարիսն զեմ, որոնցմէ առաջինը չէր ուզած
ընդունիլ զՔրիսկէր « իւր մամուն » վախէն
կ'ըսեն, և երկրորդը շահախորակն բեմա-
խօսութեամբ գրեթէ ծայրերէ կը թէ զՔրիսկէր
և թէ զինքը ընդունողները։ Անպիտ չ'ուրա-
տայի մէջ ուր Քրիսկէր իբր ազգակից կը
նկատուի, զեռահասակ թագուհին ամէն գուր-
գուրանք կը ցուցնէ պատկառելի ծերունոյն,
ժողովուրդը չգաղթի կեցցէներ գոչել և վա-
ժաղել տեսնել անոր երեսը։ Ամէն ազգաց
մէջ առանձնական անձեր կ'ուզեն որ Եւրո-
պայի մէջ հաշտարար Ատենա մը կազմուի և
Պօլքներուն կտաք տեսնուի, յայտնի է ընդ-
գէմ Անգլիոյ և ռակայն ամենէն աւելի այն որ
պէտք էր այդ ատենանը ուղեր, բնաւ չ'ուղեր